

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՁ

Այս տարի էս, ինչպէս աշխարհի շատ մը երկիրներու մէջ, Երուսաղէմի մէջ նշուեցաւ Եկեղեցիներու Միութեան Եօթնեակը՝ Յունուարի վերջին ութ օրերու ընթացքին, Եկեղեցիներու Միութեան վեհաժողով մատարուած և աղօթքի զօրութեան գիտակից գտնադոն համայնքներու պատկանող ժրտատնէտներ հաւաքուեցան տարբեր աղօթալոյսի մը մէջ, միասնաբար աղօթելու օրրոպան այդ նպատակի իրազօրծման համար,

Ուրիշ տարիներու նման, Եօթնեակի բացումը կատարուեցաւ Յունուարի վերջը՝ ընթերցելու Կիրակի օրը (24 Յունուար), կէսօրէ առաջ ժամը 11ին, Յրանչիականներու Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Գառարադով։ Այդ Գառարադը կը մատուցուի Արեւելեան ծէսով։ Յոյն-Կաթողիկոսներ, Հայ-Կաթողիկոսներ, Ասորի-Կաթողիկոսներ և Մարոնիներ յաջորդաբար կը մատուցանեն այդ Գառարադը։ Այս տարի Մարոնիներուն էր կարգը, որոնց Հոգեւոր Առաջնորդը՝ Մօնս. Օկոսթիկ Հորֆուշ մատոյց Ս. Գառարադ և քարոզեց, շնչեղով կարիքը ժրտատնէտան համագործակցութեան։

Երկնայեան ժամը 5ին (միւս աղօթաժողովներն ալ, բացի Հինգշաբթի օրուան հաւաքութեն, կատարուեցան նոյն ժաման), Անկլիքաններու Սէյնթ Ճօրէ Եկեղեցւոյ մէջ էր աղօթաժողովը։ Անգլիկոսներն և Արարերէն լեզուներով կատարուած Ս. Գրական ընթերցումներէն և երգուած աղերէն ետք, բոլորը միասին արտասանեցին Նիկիական Հանգանակը, որ աւելի համառօտ աւ պարզարանեալ է և մը ունի Անկլիքան Եկեղեցւոյ մօտ, պահելով հանդերձ համարբերը ժրտատնէտան հաւատքին։ Եպիսկոպոստոսն Երէցնիւնէն մին խօսեցաւ Եկեղեցւոյ Միութեան գաղափարին շուրջ։

Երկուշաբթի, 25 Յունուարին, Յրանչիականներու Մայր Տաճարը լեցուն էր այլադան Եկեղեցիներու պատկանող հոգևորականներու և աշխարհականներու բազմաթիւ ժամը։ Համառաւար երգեհոնաւոր Օկոսթիկ Լամայի նուազածութենէն ետք յայտագիրը բացուեցաւ Ս. Հոգիի նուիրուած տաղով։ Բեթղէմիէմի Լատինաց վանքի Տեսուչ Հայր Մարուս հանդէս եկաւ ժրտատնէտան համագործակցութիւնը ջատագովող քարոզով։ Տիրամօր ձօնուած աղէ մը ետք եղան Ս. Գրական ընթերցումներ՝ Անգլիկոսներէն, Արարերէն, Սլաւոններէն, Իտալերէն, Յրանսերէն և Գերմաներէն լեզուներով։ Հոգշ. Տ. Արփիար Արդ. Տէմիթեան (որ Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեանի և երկու Սարկաւազներու հետ ներկայ էր հաւաքութիւն) կատարեց Յրանսերէն ընթերցումը՝ Կորնթացւոց Առաջին Թուղթէն (1-10րդ համարներ) և յաջորդ մաղթանք-աղօթքը։ Միաբնական արտասանուած Տէրանչական Աղօթքէն ետք, զոր ներկաներէն իւրաքանչիւրը արտասանեց իր մայրենի լեզուով, Յրանչիականց Կիւսթոս Հայր Իկնազիօ Մանչինի փակեց երեկոյթը իր օրհնութեամբ։

Երեքշաբթի, 26 Յունուարին, հաւաքութիւնը կայացաւ Լուսեբականներու Եկեղեցւոյ մէջ։ Գերմաներէն, Անգլիկոսներ և Արարերէն լեզուներով կատարուած Սաղմոսներու և Աստուածաշնչական այլ հատուածներու ընթերցումէն և Տաղերու (Hymn) երգեցողութենէն ետք, Երէց Եօրէն Ուէրման ըրաւ իր խօսքը։ Երգեհոնի միջոցաւ ներկաներուն հրամայուեցան Պալի հոգեւոր երաժշտութենէն (Cantata) պատառիկներ։ Յետոյ բոլորն ալ ներհաստան բարձրանալով՝ ճաշակեցին հաց և գինի՝ մեր Փրկչին մարմինն ու արիւնը խորհրդանշող Մեր կողմէ ներկայ էին՝ Հոգշ. Տ. Կոմիտաս Արքեպիս Երէպէթեան և Բարշ. Սկար Սրկ. Ալմանեան։

Չորեքշաբթի, 27 Յունուարին, Եթովպական Մայր Եկեղեցւոյ մէջ էր աղօթաժողովը։ Հակառակ վայրէի հեռաւորութեան՝ լեցուն էր բոլորաձև Եկեղեցին, Հապէշ Եկեղեցւոյ երեկոյեան ժամերգութեան կատարումէն ետք, համայնքապետ Գերաշնորհ Տ. Մտաթիաս Եպիսկոպոս խօսք առաւ Անգլիկոսներէն լեզուով։

Հինգշաբթի, 28 Յունուարին, Սիոնի վերջին Ընթրեաց վերնատունը լեցուն էր բազմազգի հաւատացեալներու բազմութեամբ: Ժամը 4ին սկսած և աւելի քան ժամ մը գրաւող ճոխ յայտագրի ընթացքին, մեր Ստրկաւագններն ու Ժառանգաւորները, առաջնորդութեամբ Հոգչ. Տ. Ասպետ Վրդ. Ի, Հոգչ. Տ. Արփիար Արեղոյի և Դպրապետ Տիար Սահակ Դաւալանի, բացին հաւաքոյթը «Օրհնեցէ՛ք զՏէր» շարականի երգեցողութեամբ: Քիչ ետք անոնք երգեցին նաև «Գովեա երուսաղէմ զՏէր»-ը, իսկ յայտագրի աւարտին՝ «Սիոնի որդիք զարթիք: Հանդէս եկան նաև մօտակայ Տորմիսիոն Արքայաբանի և Բողոքականներու երգչախումբը: Հոգևոր ընթերցուածները կատարուեցան զանազան լեզուներով — Եբրայերէն, Անգլերէն, Յունարէն, Արաբերէն և Ֆրանսերէն: Ուշագրաւ էր մանաւանդ եղանակաւորուածով արտասանուած Սաղմոսը՝ բնիկ իր լեզուով: Հաւաքոյթի աւարտին, բոլորն ալ ուղղուեցան Սրբավայրին կից՝ «Ս. Հոգւոյ մատուռ» անուամբ ծառօթ սենեակը, ուր քանի մը վայրկեաններու լռութենէ և «Հայր մեր»-ի երգեցողութենէն ետք, Հոգչ. Տ. Ասպետ Վրդ. (Հաւաքոյթին ներկայ էր Գերշ. Տ. Շահէ Մաքեպօ, որ սակայն ժամը 5ին ստիպուեցաւ մեկնիլ գործի բերումով), փակեց աղօթածողովը իր օրհնութեամբ:

Ուրբաթ, 29 Յունուարին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին էր վիճակուած հիւրընկալել աղօթածողովը: Երկնայան կիսամութին, եկեղեցւոյ խորհրդաւոր կամարներուն տակ, հաւաքոյթը բացուեցաւ Ասորի Հայր Սիմոնի կողմէ Արամբէն լեզուով (Քրիստոսի խօսած լեզուն՝ ըստ աւանդութեան) արտասանուած Տէրունական Աղօթքով: Յայտագրից մէծ մասամբ կը բաղկանար մեր երկնայան ժամերգութեան սուգ-մասնէնէն, աղօթքներէն և մեղեդիներէն, օրոնցմէ «Ողնարկեցո՛ւք Անգլերէն թարգմանութիւնը կարդացին Հայր Տէյլիտ Էլլիօթ և Հայր Քրէյկ: Կատարուեցան նաև Ֆրանսերէն, Դերմաներէն և Յունարէն լեզուներով ընթերցուածներ, վերջինը՝ Ս. Աթուայս բարեկամ և Տորմիսիոն Արքայաբանի վանահայր Հ. Նիկողայոս Էկէնտէրի կողմէ: Գարօզը, Անգլերէնով, կարդաց Ժառ. Վարժարանի Տեսուչ Աթ. Տ. Ներսէս Աւագ Գնչ: Ճէպէճեան: Յոյն-կաթոլիկներու Պատր. Փոխանորդ Լուծֆի Լահնամ Եպիսկ. Արաբերէնով արտասանուած «Հայր մեր»-ով փակեց աղօթածողովը:

Շաբաթ, 30 Յունուարին, զանազան յարանձանութեանց պատկանող քրիստոնեաներ ներկայ եղան Փողօթոյթի վրայ կատարուած Յաւնաց «Հսկում»-ի կարգին:

Կիրակի, 31 Յունուարին, Յոյն-կաթոլիկներու եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ եղբայրակիչ հաւաքոյթը: Տասնամեակէ մը ի վեր առաջին անգամն էր որ նման հաւաքոյթ մը կը կատարուէր յիշեալ եկեղեցւոյ մէջ: Հսկառակ տեղատարափ անձրեւին ու փոթորիկին, լամբղջովին լեցուն էր գողարիկ աղօթատեղին: Յայտագրին մէջ մաս առին նաև մեր Ստրկաւագ-Ուրարակիրները, երգելով «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականը, առաջնորդութեամբ Դպրապետ Պր. Ստակի: Ներկայ էր նոյնպէս Հոգչ. Տ. Ասպետ Վրդ.: Համայնքապետ Լուծֆի Լահնամ Եպս., Աւստրալական մի քանի ընթերցուածներէ և շարականներու երգեցողութենէ ետք, կուս քարոզով մը անդրադարձաւ վերջին տասնամեակներուն ծաւալած եփմեցիկ շարժումէն ծաւալած բարիքին, զայն հակադրելով նախորդ դարերու մեկուսացումէն ծնած պառակտումներուն ու ցրտութեան:

Մեծ է մեր գոհունակութիւնը երբ տարուէ տարի, և մասնաւորաբար այսպիսի առիթներով, ականատես կ'ըլլանք եփմեցիկ շարժումի ծաւալման: Երբ մարդորոտութեան և բանադրանքի նման եպիբեւի ու դաթթեղեղեցոցիչ տարքներ պատմութեան կ'անցնին: Ու նաև երբ Եկեղեցիներու մէջ կ'արմատանայ այն համոզումը թէ դաւաճ կ'անցնի մանաւանդ իրաւունք երկարեւի — տարբերութիւնները արգելք մը չեն, որ-նական — յոգնաբ մտնր ու զանցաւելի — տարբերութիւնները արգելք մը չեն, որ-պէսզի անոնք ձեռք երկարեն իրարու, համերաշխութենէն ծնած համագործակցութեամբ թուր կանգնելու համար հակակրօն գաղափարաբանութիւններու դէմ: